ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՄԵԾ ՊԱՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Մեծ պարնի համայնք, գ. Մեծ Պարնի, հեռ.0255 61897
էլ. փոստ՝ metsparni.lori@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

«30» ապրիլ 2019 թ. N 42-Ա

## Բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի գործառնական նշանակությունը հասարակականի փոխելու մասին․

Համաձայն ՀՀ կառավարության 2015թ հուլիսի 23-ի թիվ 828-Ն որոշման 2 և 3 կետի հիմք ընդունելով ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության 11.03.2019թ. եզրակացությունը, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի 10.04.2019թ թիվ 01/11/.1/1800-19 գրությունը և Խաչիկ Ոսկանյանի դիմումը ու անշարժ գույքի նկատմամբ պետգրանցման 2411983 վկայականը.

ՈՐՈՇԵՑԻ

1. Խաչիկ Ոսկանյանին պատկանող 06-075-0297-0001-6 ծածկագրի տակ գտնվող 24-րդ փողոց թիվ 11 հասցեում գտնվող 0.1543 հա բնակավայրերի հողերի բնակելի կառուցապատման գործառնական նշանակությունը փոխել բնակավայրի հողերի հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողերի.
2. Սույն որոշումը ներկայացնել ԱԳԿ գրանցման համար:

Համայնքի ղեկավարի ժ/պ Հ. ՅԱՂՈՒԲՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՄԵԾ ՊԱՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Մեծ պարնի համայնք, գ. Մեծ Պարնի, հեռ.0255 61897
էլ. փոստ` metsparni.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«16» մայիսի 2019 թ. N 43-Ա

## ՄԵԾ ՊԱՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎՆԵՐԻ, ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՒ ԾԱԽՍԵՐԻ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ԲԱԽՇՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33 հոդվածի 1-ին կետով և հիմք ընդունելով <<Մեծ Պարնի համայնքի 2018 թվականի բյուջեն հաստատելու մասին>> Մեծ Պարնի համայնքի ավագանու 2019 թվականի մայիսի 14-ի թիվ 11-Ն որոշումը,

որոշում եմ՝

1. 2019 թվականի բյուջեի ծախսերն ու եկամուտները բաշխել ըստ եռամսյակների:
2. Հաստատել 2019 թվականի բյուջեի եկամուտների ու ծախսերի եռամսյակային բախշումը՝ համաձայն հավելվածի:

Համայնքի ղեկավար ՝ Գ. Պայյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՄԵԾ ՊԱՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Մեծ պարնի համայնք, գ. Մեծ Պարնի, հեռ.0255 61897
էլ. փոստ՝ metsparni.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

«30» մայիսի 2019 թ. N 44-Ա

## ՀՈՂԱՄԱՍԻ և ՇԵՆՔ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետությունում շենք շինությունների կամ դրանց մի հատվածի գործառնական նշանակությունը փոխելու կարգը հաստատելու մասին ՀՀ կառավարության 02.02.2002թ. թիվ 88 և ՀՀ Լոռու մարզի Մեծ Պարնի գյուղական համայնքի հողերի օգտագործման սխեման հաստատելու մասին ՀՀ կառավարության 19-01.2012թ. թիվ 25-Ն որոշումներով և հիմք ընդունելով Մեծ Պարնի համայնքի բնակիչ Խաչիկ Ոսկանյանի դիմումը

Որոշում եմ

1. 06-075-0297-0016 ծածկագրի 0.1543 հա հողամասը փոխադրել այլ արդյունաբերության, ընդերքի օգտագործման և այլ արտադրական նշանակույան գյուղատնտեսական արտադրության օբյեկտների :
2. Քանի որ շենք շինությունները հաստատվում են առանց շինարարական աշխատանքների, գործառնական նշանակությունը փոխադրել գյուղատնտեսական արտադրական օբյեկտի՝ անասնագոմի:

Համայնքի ղեկավար ՝ Գ. Պալյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ՄԵԾ ՊԱՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Մեծ պարնի համայնք, գ. Մեծ Պարնի, հեռ.0255 61897
էլ. փոստ՝ metsparni.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«30» մայիսի 2019 թ. N 45-Ա

## <<ՄԵԾ ՊԱՐՆԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՊՈԱԿ-Ի ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔԻ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության 35-րդ հոդվածի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29-12-2005թ. թիվ 2387 որոշմամբ ;

ՈՐՈՇԵՑԻ՝

1. Մեծ Պարնի համայնքի 06-075-0211-0104 ծածկագրի 1.29 հա հողամասին և շինությանը տալ 15-րդ փողոցի 2-րդ հասցեն:
2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

Համայնքի ղեկավար՝ Գ. Պալյան